

տաւորները! Ինչ ըրած ունին ու կր-
նեն, եթէ ոչ օտարին առջնու օրը
օրին մրուր քսել հայութեան անա-
րատ մնացած ճակտին վրայ: Ու փո-
խանակ իրենց մեղանշումի օրերուն
համար քառաթիւն փնտռելու, լրրու-
բարբ փողովուրդին հարազատ զա-
ւակը՝ խորդ կը ներկայացնեն անոր
աչքին, իրենք՝ այլասերուածները՝
ինքզինքնին հարազատ ներկայացնե-
լով: Բայց հայ ժողովուրդը սովորած
է գնահատել ոչ հասկնալ իր հարա-
զատները, իր պաշտպաններն ու ա-
խոյեանները, ու յաւիտենականօրէն
խուլ պիտի մնայ մշտնջենական ցա-
ւագար զոհիններուն: Ան՝ այսօր ոչ
թէ խօսքին, պոռչուքներուն պիտի
ուշադրութիւն դարձնէ ու հատաք
ընծայէ, այլ Գործին միայն Գոր-
ծին:...

Եթէ կուզենք ժողովուրդին, աչ-
գէն սիրուել, գնահատուիլ, պէտք է
ցոյց տանք գործքով, անոր բարօ-
րութեանը համար մեր յղացած պաշ-
տելի գաղափարը: Գործնական գարու-
մէջ է որ կարենք, ուստի եթէ կու-
զենք անկեղծ ցոյց տալ ինքզինքնին
մեր խօսքերուն ու գրուածքին մէջ,
պէտք է որ օղջին բառերուն իրա-
կան մարմնացում մը պարզեցնենք:

Որքան շնորհայտ բուն Ն. թէս,
կուզէի մի քանի կարեւոր լուրեր հա-
զորդել քեզ, սիրելիս, ու սկսայ,
անոնք պահ մը մոռցած՝ անձանթով
ու աննպատակ թախտու մնեք ունե-
նալ ինձմէ անկախ պատճառներով,
որը յուսով ներքին պիտի բլլայ ին-
ծի, քանի որ ամէն ատեն երբ ազ-
գային ծանօթ խնդիրներ կը յայա-
շափենք, չէ գարելի անհոգ ու ան-
տարբեր անցնիլ այն ներքոյս թու-
նաւոր տատակները, որոնք օրը օ-
րին կաճին ու կը մեծանան, իրենց
չօրջի հակերը խնդրելով: Պէտք է
որ արմատախիլ ընեն զանոնք երբ
պատեհութիւնը կը ներկայանայ:...

Փուցէ խորհած ես վերջերս թէ
հայ յեղափոխական վերջին շարժում-
ները իրենց վախճանին հասած են,
թէ հայ ախոյեանը դժնայ բազմին
ահաւոր իրականութեանը հանդէպ
գտնուելով, պահ մը տեղի առած ու
յուսահատ է: Բայց ո՛չ, իրականու-
թիւնը բոլորովին հակառակը կը պար-
զէ: Հայ զինուորը պիտի չի յուսահա-
տի, պիտի անդի չիտայ, մինչեւ որ
կամ մատաղ ըլլայ ազատութեան սը:

սեղանին, եւ կամ յաջողութեամբ
կարողանայ պատկել իր պաշտելի գա-
ղափարը:...

Լուրք գարձեայ Հայաստանն է
Սասունըն: Հայր սկսած է կոխի, ու պիտի
շարունակէ. ինչպէս կըսէ Անդրանիկ
իւր Կրկնապատմութեան ուղղած վերջին
բողոքագրին մէջ. մինչեւ ան չի ան-
նայ յարգուել իր մարդկայնական
իրաւունքներուն իր երկրին մէջ:
Եւ կը կրկնէ ան, ո՛չ թէ միայն Սա-
սունը կամ Մուշը պիտի բլլայ կոռ-
ղը, հապա թրքահայաստանի բոլոր
գաւառները:

Ու ասոր պպացոյց օրինակը հա-
սած է: Հայր սկսած է կատաղի, վրէժ-
խն դրական կոխ մղել, այնքան
զոհը որ Սասունը ստուս գեոթարմ
է հայ ախոյեանին սրտին մէջ, ու
ան պէտք է, ստիպուած է անոնց
վրէժը լուծել:

Այսօր ուրախութեամբ կը կարգւած
հետազոյր մը «Տէյի Նիւզ» մէջ, որ
կըսէ թէ օերկու վրիժառու: Հայ ա-
պտաւորներու ստուար խումբեր, որք
Անդրանիկին միտնալու կամուրջնե-
րն, իրենց ճանապարհին թուրք զին-
ուորներու կը հանդիպին, որոնք կու-
զեն արգելք հանդիսանալ անոնց գը-
նացքին: Հայ կարիները շուտով
լաւ պիտի կը գրաւեն ու անց
կոխի կը կրկնուի, Հայերը պայթուցիկ
ներու լաւ պարք մը ունէին, զոր
անխնայ կը գործածեն, Կոնք եր-
կար կը շարունակուի, ու այս ան-
գամ հայերը յաղթական կըլլան: Հար-
իւրներով թիւրքեր ու չիւրսեր կըս-
պանուին, ու հայ կարիները իրենց
վրէժը կը լուծեն կատարուած նա-
խորդ բարբարոսութիւններուն փո-
խարէն: Ինչպէս կարծես մեռե-
լատանի մը կը նմանէր, քանի
որ զինուորներէն շատերը գրեթէ
սպաննուած էին: Հայերը գրեթէ
փաս չեն տար, ու խումբերէն մին
ձեղքելով քիւրսերու ու թուրքերու
խառնիճազանքը զէպի Ալեքէ կը յա-
ռաջանայ:...

Այս դէպքը կը կատարուի յուլիս
13ին:

Ասկէ կարելի է գուշակել թէ կը-
ռիւր կը շարունակուի դեռ եւ անկի
կատարողէն, աւելի վրէժդիրական
ոգիով

Վերջին պահուն կիմանա՞ծ թէ Ա-

մերկայի հայոց առաջնորդ Սարաճ-
եան եպիսկոպոսու Պարսկաստանի
առաջնորդ Այվատեան եպիսկոպոսը
Տր. Լորիս Մեղիքովի ընկերակցու-
թեամբ իրենց Փրանսական միտար-
ներու ու նախագահ Լուպէի ըրած
այցելութիւններէն վերջ իրը պատ-
գամաւոր, Հայրիկէն զրկուած՝ հոս
Լոնտոն հասան, անգլ. բարձր, ազգե-
ցիկ շրջանակներուն մէջ հայկական
հարցին մտաւոր լուծում մը հայցե-
լու: Իրենց գաղափար համակրելի
ընդունելութիւններով պատուուած
է արտաքին գործոց նախարարէն եւ
ուրբիշներէն: Տեղական թերթերու
ներկայացուցիչները փութացած են
տեսակցելու անոնց հետ, ու արդէն
այժմ ճանօթ ըլլալով անոնց գաղափար-
աբ ամէն տեղացիներուն, ամէն ոք
համակրանքի խօսքեր կրնէ:

Հայ կղերք եթէ ուզէ ինչն՝ չէ
կարող ընել: Եւ սակայն գոհու-
նակութեամբ է որ կը անհանդի-
մանք կանգնած պարսկական թեան
վեւժ բարձրութեանը վրայ: Ուրա-
խութիւնն սրտագին, ու թող հաս-
կնան անոնք թէ իրենց պարտականու-
թիւնն է ժողովուրդին գիտակից,
պարտաճանաչ դասին նեւ ձեռք ձեռ-
քի տուած ամենուս աննայցած ա-
զատ կեանքի անհոջ իրականացումին
համար աշխատել, Իսկ ս՛որ են Իւ-
թիւնեան պարտաւորները, Մոնթե-
թարլոյի կամ Մարտիէյի ո՞ր պղը-
նած անկրեւները իրենց հոտած է:
ու թիւնները կը զուարճացնեն. խոր-
հեցան անգամ արգեօք գործնա-
կան քալ մը ցոյց տալ դէպի իրենց
պարսկական թիւնները... ամօթ,
նախատինք անոնց:

Հայ ժողովուրդ, դուրս նեւէ քու
մէջէ՞ք այն գաւակները, որոնք քիչ-
մով կարգին. բայց երբէք չեն խոր-
հիր քեզ ապրեցնել:...

Կրկին, սիրելիս, շուտով կը տես-
նուե՞նք:

Փոյգ
Վարդու
Լոնտոն 11 օգոստ 1904

ՍԱՍՈՒՆԻ ԿՐԻՒՆԵՐՈՒՆ ԱՌԻՓՈՎ
—(0)0—
է.
Թուրքիւն Սասունցի 1899-1900 թն
Տեսա՞ք անցած անգամ թուրք կա-

սովարութեան գործ դրած ոչնչացու-
մի սխալմամբ իրողութիւններուն
պարկ մէկ պատկերը, զեռ 1896-1898
ին, արիւն-աւերի թուականներէն
անմիջապէս ետքը գրեթէ:

Տեսա՞ք նաև Սասունցի արի լեռ-
նակներուն մէջ երեւութապէս մե-
ռած կարծուած ինքնապաշտպանու-
թեան Լճրոսացու մի կայծերուն
պլպլու մը:

Բայց երկուքն ալ ատ չափով չէին
կոնար վերջանալ:

Հազմանքը և ոչնչացումի ծրարի-
րը անա՞ջ տարուեցաւ աւելի կատա-
ղի, աւելի սպանիչ:

Լճրոսացու մի կայծերը սկսած
զարգանալ Սասունցիին մէջ աւելի
արագ, աւելի յուսադրիչ, աւելի
սպանալից:

Շարունակեմք սակայն իրողու-
թիւններու թուով կարգով, նախ
հայրածանքերու, նկարագրութիւնը
որ իր ետեւին բնականօրէն կը բեր-
ըմբոստացու մը:

Եւ այս անգամ խօսքը տանք ուրիշ
աղբիւրի մը — Լայ կղերքին —


Երբ մէկ էր քանի զարնուցի միւս
երեսը այ դարձուր ի վարդապետու-
թեան գերի եղող, մեծերու հնա-
զանգ և ստրուկ ըլլալ պատուիրող
կերտ է որ գրիչ ձեռք կաննէ տիրող
հայրածանքներու զէմ բողոքելու, ա-
տի կը նշանակէ թէ՛ ինչ մեծ վատութիւն
միայն անկորին հասած է, հապա
ոսկորն ո՞ր կտրած անցած...:

Ու երբ կղերք իր համբերութեան,
հնազանդութեան, խոնարհութեան
քօղն է որ մէկ կի կը նեւէ, ա՛յ երե-
ւակայցեք թէ՛ ինչ մեծ վատութիւն
է, ինչ ազգապաւ դեր է որ կուզան
խաղալ արտասահմանի վերակազմալ-
պագայ սննդը, ստրկութեան ներ-
կայացուցիչները, հնակազմալ-խո-
հմները, ինչ սոսկալի ծաղրանք է
որ կուզեն ասանք, ձեռք ձեռք տը-
ուած, Սասունցի ժողովուրդին սու-
սպանութեան, ընդհու կը ծառայեն
ճամբերուն և հայրոջանքներուն և
զնոր մեթոտներուն ճառախօսական
— արշաւանքները...:

Խօսքը տանք Բարկէն վարդապե-
տին:

Մշոյ Սասուն գաւառի հայերը
— կը գրէ ան իր համբաւոր տեղե-
կագրին մէջ — հարկադրուած են յիս-
ֆիրութեան անուանով յատուկ սուրք
մը հատուցանել քիւրք աղանքու,
որոնք այս գաւառակը բաժնած են ի-

ԵՐԿԻՒՂԸ



Ինթրիքէն յետոյ կարճակը բարձ-
րացանք: Մեր առջեւ, Միջերկրա-
կանը իր ամբողջ մակերեսին վրայ,
գոր լուսինը արծաթ լոյսերով կը
վէտվէտէր փայլուն, սարսուռ մը
խկ չէր երեւեր: Ընդարձակ շագե-
նաւը կը ստելը, աստեղագորդ եր-
կնքին վրայ ձգելով սեւ ծուխի օձա-
նուտ ոլորտ մը, ու մեր ետին, ըս-
պիտակ ջուրը, ծանրակիր չիտու-
թեան արագացեալ յուզում, պը-
տուտակէն ծեծուելով, կը փրփրէր
կը կարկամէր, այնքան աչր կը
կուրացնէր, որ կարծես լուսինն
եռացող լոյս մը ըլլար:

Վեց կամ ութը հոգի էինք հոն,
լուս, ապշած, աչքերնին դէպի հե-
ռաւոր Ափրիկէն դարձուցած, ուր
կուղեորուէինք: Հրամանատարը որ
մեր մէջ կեցած զլանիկ մը կը ծխէր,
յանկարծ վերսկսաւ ընթրիքին խօ-

սակցութիւնը:

— Այո, այդ օրը ես երկիւղ զգա-
ցի. իմ նաւս մեց ժամ, փորը ծայ-
ռին միտած մնաց ալիքներէն ծեծ-
ուելով, Բարեբախտաբար իրիկուսն
մաս անգլիական ավիանաւ մը որ
նշմարած էր զմեզ, հիւրընկալեց:

Այն ատեն այրած զվճարով խոշոր
մարդ մը, կերպարանքը լուրջ, մին
այն մարդկերէն որոնք կը զգաս թէ
երկար անձանթի երկիրներէ սնցած
են, անընդհատ վտանգներու են-
թարկուելով, եւ որոնց հանդարտ
նայումքը կարծես տակաւին բան
մը կը պահէ իր խորունկութեան
մէջ. մին այն մարդերէն որ կը
գուշակեն թէ քաջութեամբ թըրծ-
ուած են, առաջին անգամ ըլլալով
խօսեցաւ:

— Հրամանատար, կրտսէր թէ երկ-
իւղ զգացեր էք, ես չեմ հաւատար:
Սխալ կը գործածէք բառը եւ ձեր
կրած զգայնութիւնը սխալ կը բա-
ցատրէք: Կորովի մարդ մը երբէք

անմիջական վտանգին առջեւ երկիւղ
չունենար: Կը յուզուի, կը բորբոքի,
անձկութեան ու տագնապի մէջ կի-
նայ բայց երկիւղը ուրիշ բան է:

Հրամանատար խնդրով բաւ:
— Բայց ես երկիւղ զգացի կըսեմ
ձեզի:

Այն ատեն պղնձագոյն մարդ մը
զանդող ձայնով մը արտասանեց.

— Թոյլ տուէ՛ք որ ես ալ ըսցաւ-
րութիւն մը տամ: Երկիւղը (եւ ա-
մենէն յանդուգն մարդիկն ալ կր-
նան երկիւղ զգալ) սարսափելի բան
մըն է, վայրագ զգայնութիւն մը,
կարծես հոգւոյն տարբազարութիւնն
ըլլայ, սրտին ու մտքին անտեղի մէկ
լուսնոտութիւնը, որուն յիշատակը
ինքնին տագնապի սարսուռներ կը
պատճառէ: Բայց, երբ մարդ քալ է,
անկա շի պատահեր ոչ յարձակման
մը, ոչ անխուսափելի մահուտն մը
եւ ոչ ալ վտանգին ծանօթ ու եւ է
մէկ ձեւին հանդէպ: Անկա կը պա-
սանի կարգ մը անբնական պարագա-

ներու մէջ. կարգ մը խորհրդաւոր
ազգեյութեանց տակ, տարտամ վը-
տանգներու առջեւ միայն, ճշմարիտ
երկիւղը երբեմնի ջնորական սար-
սափներու վերջու լուծում մըն է կարծես:

Մարդ մը որ ոգիներու կը հուսատայ
եւ որ կերեւակայէ թէ գիշերուան
մէջ ուրուական մը կը տեսնէ, երկ-
իւղը կը զգայ իր ամբողջ զարհուրելի
սարսափներով:

Ես լոյս ցերեկով երկիւղ ունե-
ցած եմ, առկէ մօտ տասր տարի ա-
ռաջ: Անցեալ ձեռն ալ, գիտեմքերի
գիշեր մը նորէն երկիւղ ունեցայ:

Եւ սակայն, ես նազարաւոր ար-
կածներ պարած եմ, բազմաթիւ ա-
զտներ սրտնք կընային ժահագու ըլ-
լալ:

Ահա ինչ որ ինձի պատահած է
Ափրիկէի մէջ:

Ու արկալի Հրամանատարի աւագ-
կոյոր կանցնէինք, Աշխարհի ամե-
նէն տարօրինակ երկիրներէն մէկն է
այդ կողմերը: Երեսակայցեք ա՛յ,

րենց մէջ շրջանակներու, և այս շրջանակները նոյն տուրքը կը վճարեն ամեն ցեղային տի, որու ազգացութեան ու բնակավայրի ներքին են: Արքայութի տուրք նման, ամէն տարի կը նորոգուի, այս տուրքը և կը վճարուի անպատճառ: Այս տուրքը հաւաքող ցեղերն են Երանցիք, Սալթիք, Պարթիք և այլն: Այս տուրքը հետեւեալ կերպով կը վճարուի. Սասնոյ Մասն Առաջինը վճար կուտայ 20 ուլար, 20 իսար իւղ և 1200 դրուչ: Այսին սկզբում Կարող համարուած տուն մը 7-1 ուլար, 5-600 դրուչ, 5-10 ուլար քուրդ, իսկ հասարակ տուն մը 3-4 ուլար, 1-200 դրուչ, իւղ, բուրդ և այլն: Ամուսնութեան ատեն ալ խափրութեան մասնաւոր տուրք մը վճարուի հարկադրուած են, և այսուամենայնիւ այս աղաներն յափշտակութիւններ և գողութիւններ կ'ընեն, մանաւանդ կառավարութեան կայսրածոց պաշտօնեաներուն հետ միացած խաբարի միջոցներով թափուց ընել ստղով, հայոց կառավարներն կիւրացնեն, Գիրք ցեղապետներն կը ծախեն ու կը գնեն իրենց մէջ, Սաֆի-գերի են հայերը և ամենէն եղբարկանն այն է որ, երբ ցեղապետ մը խախտէ ուրիշ ցեղապետի մը շրջանակին հայերը ու սպաննէ, նոյն ցեղապետն այս միւսին շրջանակին հայերուն վրայ կը յարձակի, և երբ ուրսպանք կը գործէ, և այսպէս միշտ հայն է զոհը: Սասունի Հեթմանք գիւղի հայերը իրենց հողերը չուզեցին սոսկ ազաներուն, բայց հրոսախոս մը մը պաշտօնով նոյն գիւղն, տունները այրեց, և երբեք և գիւղին երեւելի ներքէն հինգը յոշոտեցով՝ գիւղիները դեռ չեն տեսնուած ու գիւղը ջնջուեցաւ: Այս տարի ալ Ջրաղանք գիւղը ընկնելով եղաւ ծանուցեալ կոտորածով (և կը նկարագրէ կոտորածը մանրամասնօրէն)...

Ահա՛ ձեզի Բարեկէն վարդապետի գրածները, Սասունցիի քաջածին մասին, կարողացէ՛ք:

Սասունցիին տառապանքը պատմող ուրիշ նամակ մըն ալ մէջ բերենք, որ հրատարակուած է ԴՐՕՇԱԿԻ 1899-ի թիւ 8-ին մէջ և գրուած նոյն տարուան յուլիսի 10-ին:

Ահա՛ ատ նամակէն ալ կտոր մը.

«Սասունը Սուլթանի աշխիւն փուշն է եղած, չի կրնար բնաւ հանդուրձել թէ՛ չոն հայեր կան ու կը մնան,

թէ այդ տեղէն երբեմն խրատուներ և յուզումներ ծագած են ու իր հանգիստը խոտոված, Գանի մը փորձեր կատարեց աս լեռներէն վար իջեցնելու համար Սասունի ժողովուրդը, բայց երբ շօշափեց տեղացիներուն կարծիքը, առ ժամակա ետ կ'ընայ այդ ծրագիրը իրագործել: Սասունցիին պատրաստ է կրկին կոտորուիլ, ոչնչանալ, քան հեռանալ իր սարերու ու քարերու մէջէն:

... Կուսակալը Մուշ գալուն պէս անմիջապէս 200էն աւելի զօրք խրկեց Սասուն, հայերը քրքրուին զէ՛մ պաշտպանելու պատրուակով, Ջորքը հոն հասաւ չի հասաւ, կ'իջեկու գան, Աէմալ, Շէնրէք և միւս գիւղերուն մէջ սկսաւ զազանային հարկահանութիւն մը: Նպատակին է գտնուելու միջոցով այդ անօթի ու ծարաւ ժողովուրդը իր գիրքերէն քանդել, հանել ու ցիր ու ցան բռնել: Վերջիս Սասունի մէջ երեք նշանաւոր քրտեր անյայտացած էին և ահա ատոնց փոխարէն սպաննեցին Հեթմանք գիւղէն 7 մարդ և Տալուրիկի կողմերն ալ 10-էն աւելի, Հեթմանքը այրեցին և աւարի ալ տուին:

Մայիս 7/18-ին փողոսեցին Ս. Աղբիւրիկ վանքի Ղազար վարդապետը, իսկ Կ-ապարութիւնը բռնի ստորագրութիւն առաւ վանքին միաբանութենէն թէ՛ վարդապետը սպաննուած է հայ ֆէսայիներու ձեռքով:

Բուլանդի (Սասուն) Սոջ-Գալար գիւղը ամբողջովին աւարի տրուած է. գիւղի գլխին ու քանի մը ուրիշ գիւղացիներ սպաննուած են իրրեւ ֆէսայիներ, երեք հոգի ալ կորուստանուած է: Այս պահուս յետի որ կուսակալը՝ հրաման րբեր է Սասունի գիւղերու գլխաւորները Մուշ տանին, մօտ 22 հոգի:

Այ տարակոյս չի կայ որ կուսակալը բարձրագոյն հրամանով եկած է փոխորդի մը ստղով բերելու և կրակ մը վառելու ժողովուրդի գլխուն...»

Աս վերի նամակը, Բարեկէն վարդապետի տեղեկագրին հետ, կուսան պերճաբան կերպով երեւան հանել Սասունցիին անտանելի գրութիւնը:

Ամփոփենք աս թուականներուն մէջ ալ Սասունցիին քաջածները.

Ա. — Սիւթկմաթիկ ոչնչացուեց զորքը ասալ կը տարուի քուրդ աշիրէնիներու, ցեղապետներու և կանոնաւոր զօրքերու կողմէ գործ տրուած բռնութիւններով, հալածանքներով,

կարուաններու գրաւումով, ապօրէն և օրինաւոր տուրքերու գանձումով...»

Բ. — Հեթմանք և Ջրաղանք գիւղերը աւերուած ու հիմնայապակ կործանուած ու թալուած են երկու գիւղերուն մէջ 200-է աւելի հայեր կոտորուած ու գիւղացիներ գետը նետուած, սպաննութիւններ և բռնութիւններ կորի, Տալուրիկի կողմերը 14-16 հոգի, Ղազար վարդապետի սպաննութիւնը, թալուած Սոջգալար գիւղը...»

Գ. — Սասունցի լեռնականները ճնշելով վար իջեցնելու, անոնց տեղերը քանդելու և անոնց գլխաւորները Մուշ տանելու կրկին փորձեր:

Դ. — Սասունցիին ընդդիմութիւնը լեռներէն վար իջնելու և Հեթմանք գիւղացոց ցեղապետներուն պահանջներուն զէ՛մ հակառակիլը:

Ու աս թուականին է որ Սասունցի ժողովուրդը կուգայ իր ընդդիմութեան քայլովը առաջին ապստեղ իջեցնել արտասահմանի խոհեմներուն, վերականգնել ազգասպաններու երեսին...»

— Սասունցիին պատրաստ է կրկին կոտորուիլ, ոչնչանալ, քան հեռանալ իր սարերու ու քարերու մէջէն...»

Իրքան սրտապնդող և հիանալի սոսկունութիւն:

Հեթմանք գիւղացիք յանձն կ'առնեն մինչև իսկ կոտորուիլ ու թալուուիլ — ու կը թալուուին, կը կոտորուին — բայց իրենց հողերը չեն ուզեր սալ յուրդ ցեղապետներուն:

Ինչ ազդու, կենդանի օրինակ Սասունի ինքնապաշտպանութեան անհրաժեշտ կոնսերուին յաջորդող բնական զօրքերու լեռները՝ «գրաւեց զընացոյս յեղափոխականներուն վզին պլել ուզող — ան ալ զգուշի շարժման թեմամբ անոր վզին պլել ուզող — վա՛ւ, սոսր արարածներուն...»

Բայց դեռ ասի Սասունցիին ընդվզումի ստալին ու մանր օրինակն է, հեռաւարտ և դեռ պարտիկ ապստեղ վերականգնելու և սարկամիտ վատերուն եղբարի զարնուած:

Աւելի ուժգինները, և ելի սրտապնդողները պիտի տեսնենք:

Ժիրայր

Ի՞նչ է ԿՍԱՐՈՒՄ ՍՍԼՄՈՏՈՒՄ

—)o(—

Շատ անգամ էր ինձ պատահել կարգալ զանազան խերթերում, Սալթաստի լեռնաշարի մասին, բարեբազաբար չէի տեսել. բայց գալով Գարսկաստան Սալթաստ և յիշեցնելով ինձ տեսնելու զժրագողութիւնն ունենալով՝ մի անգամ եւս գալիս եմ յայտնել յարգելի ընթերցողներին, թէ ի՞նչ է կատարուում այստեղ:

Այն պարոններ, որոնք զանազան շրջաններում խօսում, ճառում են՝ յանուն մարդկութեան, յանուն ազգային իրաւունքներին, վերջապէս՝ յանուն տառապեալ հայ ազգի բարօրութեան և հանգստութեան, թող են տալիս այնպիսի բաների, որոնց բոլորին լսելը աւելորդ համարելով, միայն, գրում են՝ այն՝ ինչ որ կարելի է գրել լրագրական էջերում, հակառակ դէպքում յիշեալներ Ուղ. Սալթաստները մտնուութեան և դաւաճանութեան են վերագրելու վարժունքս: 97 թրուականին Խանասոր հաշակաւոր արշաւանքից վերջ, կառավարութեան ձեռք առած խիստ միջոցները, պատճառ են դառնում յեղափոխական գործի դադարման մի առ ժամանակ, և հէնց այդ մօմէնտում երեւան են գալիս ինչպէս յայտնի է, զանազան լեռնաշարիական շայքաները, այլեւայլ կուսակցութեան պատկանողներ՝ որոնք մտանալով իրանց սրբազան կոչումը, թող են տալիս հազար մի լրբութիւն անել: Ժողովուրդը այն աստիճան հարստահարում և կեղծքում է, որ Գաշակացութիւնը հարկադրուած է լինում ժողովրդի տարրական շահերն ու իրաւունքները պաշտպանելու համար՝ սկսիլ սոսկալի, բայց մաքրազարգող Տէրօրը, որին յաջողում է ազատել ժողո-

րուղ Ուկրաինայի աւագ դարձած և փոխորդի մէջ, երեւակայեցեք զեղնազոյն փոշիէ անշարժ ալիքներու լոխ մորթիկ մը: Լեռներու շափ կը բարձրանան այդ անհաւասար ալիքները, այլազան, ամբողջովին վերցրուած շրթայազերծ ալիքներու պէս, բայ, աւելի խոշոր վեղովէտուն պատասի պէս մասնէքաւոր: Այս կատակի ծովուն վրայ, յամր ու անշարժ, հարաւ լափող արեգակը կը թափէ իր անրեկեղծի բոցերը ուղղակի: Չէտք է մագլցիլ այս ոսկեգոյն մոխիրի շերտերէն, վար իջնել, յետոյ նորէն մագլցիլ. անդադար մագլցիլ, առանց հանգիստի, առանց զովութեան: Ձիերը հանդարտ մինչեւ ծուռքերին կը մխրձին ու կը սահին. իջնելով անակնկալ բլրակներու միւս գագաթափէն:

Երկու բարեկամներ էինք և և մեզի կը հետեւէին ուրիշ սիւսիակներ և շոր ուզուր իրենց ուղտապաններով: Ալ չէինք խօսեր, տաքէն,

յոգնութենէն ընկնուած ու ծարաւէն պապակած, կիւրիչ անապատին պէս: Թանկարժեք մարդերէն մին տեսակ մը ազազակ արձակեց, և ամէնքը կանգ առին: Անշարժ մնացինք, անբացասելի երեւոյթէ մը յանկարծակիի եկած, որ այն անձանօթ երկիրներուն մէջ ճամբորդողներուն միայն յայտնի է:

Մեր մօտ տեղ մը, անորոշ ուղղութեան մը վրայ, թմբուկ մը կը զարնուէր. աւազակոյտերու խորհրդաւոր թմբուկը, Որոշակա կը լրսուէին իր բաղխումները, մերթ աւելի թրթուած, մերթ մեղմ, պահ մը ընդհատուելով, յետոյ վերականգնելով իր մտացածին գափուներ:

Արարները, զարհուրած, մէկգծելու կը նայէին, և իրենցմէ մէկը իր լեզուով ըսաւ. «Եմանք մեր վերելն ու եւ անա, յանկարծ, ընկերակցս, բարեկամս, գրեթէ եղբայրս, ձիէն ինկաւ, գլուխը դէպի առաջ, արեւահարումէն շանթահարուած:

Երկու ժամ, մինչդեռ ի զուր կը փորձէի զինքը փրկել, միայն այդ անշարժ թմբուկը կանխելու կը խցնէի իր միտքիս, ընդմիջ ուղ ու անհասկանալի աղմուկով: Կըզգայի որ վախը, ճշմարիտ վախը, ժանտաղձ վախը, ոսկորներու մէջ կը քաշէր, իմ սիրելի ընկերոջս գիւղի շուրջը, աւազի շորս լեռներու մէջէն: Մինչդեռ անձանօթ սրճագանքը մեզի կը բերէր թմբուկին արագ գափուներ ֆրանսական գիւղէն երկու հարիւր փարսախ հեռաւորութեան մէջ:

Այդ օրը հասկցայ թէ ի՞նչ կը նշանակէր երկիւղ զգալը, և և եւելի լաւ հասկցայ ուրիշ անգամ մը...»

Հրամանաւարը պատմողը ընդհատեց ըսելով.

—Ներողութիւն, պարոն, իսկ թմբուկը ի՞նչ էր:

Ճամբորդը պատասխանեց.

—Չեմ գիտեր. մէկն ալ չի գիտեր: Սպանները, որոնք յաճախ այս եղա-

կան աղմուկէն յանկարծակիի կուգան, ընդհանրապէս զայն կը վերագրեն չոր խոտի կոյտերու զարնուող հողմաւար աւազահատիկներու կարկուտին, որուն արձագանքը կը խոշորնայ. կը բաղձապատկուի, շափազանցօրէն կուռնայ աւազակոյտերու ծորձորումներով: Որովհետեւ միշտ դիտած են որ այդ երեւոյթը յառաջ կուգայ արեւէն այրուած փոքրիկ տունկերու շրջակաները, որոնք մաքրազաթի կարծրութիւնը կուռնան:

Հեռաւարտ այդ թմբուկը տեսակ մը ձայնի կրկնելու ուրիշ ըլլալու է, ուրիշ ուրիշ, բայց ես շատ վերջը հասկցայ զայն:

Հիմա գանք իմ երկրորդ յուզմանս:

(Շարունակելի)

վորգը, այդ պատահա Սէմա-
կից: Դորա մասին վկայում են
բոլոր սալմաստեցիները: Այդ
մամանակից և կսկսի կանոնա-
ւոր գործունէութիւնը Դաշնակե-
ցութեան կողմից: այն է՝ կազ-
մակերպում են գիւղերը գրա-
մական և զինւորական խմբեր,
զարթնում է ընդհանուր ոգեւո-
րութիւն, մի խօսքով՝ գործը
գրում է լաւ և հաստատուն հի-
մունքներ վրայ: Բայց, ինչպէս
սեանում ենք, այդ բանը՝ դուր
չի գալիս մի քանի ետմով պա-
րուններին, որոնք ստամ մայ-
րաքաղաքներում առանց երբէք
ժողովրդի զրուեթեան մէջ մտնե-
լու, մտածում են՝ օր ու գիշեր
իրենց ստամոքսաբանութեան
մասին և ի հարկէ եկամուտի ալ-
բերներ որոնում և աղբիւր պատ-
րաստում է: Սալմաստի ժողո-
վորգը ըստ յիշեալ պայմանների
կարծիքին «ոչխարային բնաւո-
րութեան տէր է, որ կողմ որ քը-
շես այն կողմ և գնում է»: Հէնց
այդ բանն աչքի առաջ ունենա-
լով, ուշարկում են պրօպագան-
դիստներ մեծ-մեծ տիտղոսնե-
րով «Հնչ. վարչութեան ներկա-
յացուցիչներ» սրանք մտադրել
են, ինչ որ լինի անպայման
խանգարել ժողովրդի անզորու-
թիւնը: Աւրիշ կերպ չէր էլ կա-
րող լինել այդ պարունների գոր-
ծունէութիւնը, որովհետեւ ե-
կող անձնաւորութիւնները զուրկ
լինելով նոյնիսկ ամենատարբա-
կան քաղաքավարութիւնից, ոչ
մի իրաւունք չունին իրանց յե-
զափոխական կոչելու: Դորա ա-
պացոյց կարող են լինել յետա-
գայ դէպքերը: Եկողների գլխա-
ւորը՝ Պ. Հ. ն անցեալից թող
տեց իրան ամուսնանալ մի ան-
բարոյական ասորի կնոջ հետ, որ
երկար տարիներ Բաթումում ա-
նառակ կեանք վարելուց յետոյ,
վերագրած է իւր հայրենիքը:
(Շարունակելի)

**ԿԱՌԱՅԻ ԶԱՅԵՐՈՒ ԿՈՐԸՆՏԻՐ
ՊԱՏՐԻԱՐԿԸ**

Արդէն ծանօցուեցաւ, որ կա-
թոլիկ հայերու հանգուցեալ
պատրիարք Էմմանուէլեանի սեղ
պատրիարք ընտրուեցաւ Ալեք-
սանդրիայի Պօղոս եպիսկոպոս
Սապաղեանը: Նորընտիր պատ-
րիարքի մասին, որ Պետրոս ԺԲ.
կոչուեր է, հետեւեալ մանրամաս-
նութիւնները կը կարգանք «Թա-
նի» մէջ:
Սապաղեան պատրիարքը ծնած
է 1836 թուին Հալէպի մէջ: Այս
քաղաքին մէջ իր տարրական ու-
սումն առնելէն յետոյ լրկուեցաւ
Լիբանանի Պղոմա վանքը, ուր և
լրացուց իր ուսումը և օժուեցաւ
քահանայ: 1863ին զրկուեցաւ

Աւրֆա, յետոյ Խարբերգ, Մալո-
տին, Երուսղէմ, Պէյրութ և
վերջապէս Եգիպտոս: Նորընտիր
պատրիարքը ինքզինքը միշտ խե-
լացի և միշտ վերապահ է ցոյց
տուեր: Ետտ լաւ բաներ կը պատ-
մուի իրեն նկատմամբ, բայց չը
թուիր ի՛նչ անիկա կարողանայ
հաստատել շատունեաներու և
Ազարեաններու ժրջանութեանը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Տեղեակ չըջաննեալ մէջ կը
կածեն թէ՛ Սուլթանը Ամերիկա-
յի եռանդուն պնդումէն ստիպ-
ուած անգի պիտի տայ: Թէ-
պէտեւ քանի մը օր առաջ ամե-
րիկական հիւպատոսութեան գե-
պանութեան վերածուելը ան-
կարելի կը յայտարարէր, ո-
րովհետեւ Թուրքիոյ մէջ զբա-
նուած ամերիկացիներու ամե-
նատար մասը միայն Ամերի-
կայի պաշտպանութեան տակ ե-
զոյց հայերն են, ուստի և Փար-
կիոյ բողոքականներու վրայ Ա-
մերիկայի պահանջած պաշտպա-
նութիւնը միայն հայերու օգտին
պիտի ծառայէ:

Սակայն արդէն «Վօլֆի» գոր-
ծակալութիւնը կը հեռագրէ թէ՛
Ամերիկայի պահանջները Թուր-
քիոյ կողմէ ընդունուած ըլլալով՝
ամերիկեան նաւատորմի զբա-
ման ստացաւ Զմիւռնիան թող-
նել:

Էրզրումի հիւպատոսական
տեղեկագիրը Լաւամբ կը հա-
տատեն թերթերու հրատարու-
կած դէպքերը Դիաթիւնի (Պայա-
զիտի սանճագ) շրջանի մէջ: Կը
հաւաստիացնեն սակայն նաեւ
թէ՛ մասնակի սպաներ, պաշտօն-
եաներ և քուրտեր ջանացած են
բարբարոսութիւնները արգիւել
և հայերը պաշտպանել: Բ. Դու-
ար կառավարչէն մանրամասն զե-
կուցագիր է պահանջեր և խիստ
հրամաններ է զրկեր գազանու-
թեանց առաջն առնելու:

ՌՈՒՍՈՒԱ

Ներքին գործոց նախարար
Փօն Պեհլէն ուղարկող անունը
յայտնուած է այժմ, անոր անու-
նըն է Սուլթանով, և կը պատկանի
նուսական ազնուական դասին:
Անոր գաւազարակիցը կ'անուան-
ուի Սիկարակի:
— Ինչպէս ժընեւի թերթերը
կը հազորդեն ռուս յեղափոխա-
կանները ժընեւի մօտ գազանի
ժողով են ունեցեր՝ թագաժառան-
գի ծնունդով առաջ եկած նոր
գրութեան մասին խորհրդակցե-
լու: Կը կարծուի թէ նոր յայտա-
գիր մը են հաներ, որով եռան-
դուն պորձի պրոպագանտի կը
հրաւիրուին:

— «Նէլլի» թէլեկրաֆի Պե-
տրոպուրդի թղթակիցը հետեւ-
եալը կը հայտնուէ: Դանի մը ա-
միս առաջ, ինչպէս յայտնի է,
անագին ցնցում առաջ բերաւ բը-
ժշկութեան հոշակաւոր սուսցա-
պետ Մերչէլի վսկիի մօտ կատար-
ուած գիշերային խուրդուի մը և
անոր աղջկան ձերբակալումն ու
բերդարգելութիւնը: Օրիորդը
կը մեղադրուի այն բանի մէջ թէ՛
երբ ան կարտու հու մօտ էր, և
կ'օգտէր վիրաւորեալ գիշերու-
րուն զրկուելիք զրքերն ու թը-
նուցիկները ձրարելու գործի
մէջ, այս ծրարներուն մէջ ան
զեանցեր է գրգռել թուսցիկները,
որոնց մէջ պիտուրները կը հրա-
ւիրուէին կառավարութեան դի-
մադրելու, և չը հնազանդուի ի-
րենց մեծերու հրամաններուն:
Ինչպէս թղթակիցը կ'իմանայ,
այս մեղադրանքը օրիորդի դէմ
հաստատուեր է, և օր. Մերչէլի-
վսկիին կախողանի մահուան դա-
տապարտուեր: Այդ մահուան
վճիռը, առանց ստորութեան
համեմատ յայտարարուելու՝ գոր-
ծադրուեր է:

Յարի քաղաքապետի մասին
հանած յայտարարութիւնը

Երբ ամբողջ աշխարհը կ'սպա-
տէ, որ Յարը իւր իսկ ուխտի հի-
ման վրայ քաղաքական յանցա-
ւորներու ներման ցանկը ստորա-
գրէ, Յարը սակայն թագաժա-
ռանգի իրաւունքները կարգադ-
րող կտակ կընէ Ռուսաստանին,
կտակը հետեւեալն է.

— «Ի՞նչ պատահի որ Յարը
թագաժառանգի իրաւասու ըլլա-
լէն առաջ մեռնի, մեծ իշխան
Միխայիլ Ալեքսանդրովիչը պե-
տութեան գլխաւորը պիտի ճանչ-
ցուի: Ինչպէս թագաժառանգի
իրաւարար պիտի նկատուի Միխ-
այիլի ֆէստորոգիւ կայսրու-
հին»:

Այս կտակը շատ արագ մտքեր
կը ներշնչէ: Սակէ կերեւայ պար-
պապէս, որ կայսրը վստահ չէ ա-
ւելնելին իր կեանքի մասին: Բայց
մտաւանակ այդ կտակն ընելու, և
մահուան սարսափը թագաժառան-
գի օրօրոցի վրայ կախուած թող-
նելու, աւելի լաւ չէ՛ր ըլլաւ
բարենորոգումներ մտցնել, որով
թէ՛ իր և թէ՛ թագաժառանգի
կեանքը կապահովուէր, թողած
ուրիշ առաւելութիւնները:

Ընկերվարույններու համագրութիւնը
Ամստրամի մէջ

Օդոտոս 14ին Ամստրամի
մէջ բացուեցաւ միջազգային ըն-
կերվարականներու համագումար:
Ինչպէս ընտրուեցաւ Վան-
Քոլը (Նոլանտայի), իսկ փոխ-
նախագահներ Պէն Կաթակաման
(Ճարտնացի) և Պիլիսանովը (Ռուս):

Երբ նախագահը ճարտնական և
ռուսական պատգամաւորները
մամանաւորապէս ողջունեց, առաջ
որոտացող ցուցի տակ իրարու
ձեռք տուին: Սրկուքն ալ ճա-
խտեցան, և երկուքն ալ խիստ
կերպով դատապարտեցին ռու-
սացի ներկայացուցիչները որո-
շում մը պատրաստեցին, որո-
ւմ մէջ կ'ակնարկուէր այն սպասու-
մի վրայ թէ՛ տարբեր երկիրնե-
րու ընկերվարականները իրենց
բոլոր միջոցներով պէտք է յի-
մադրեն պատերազմի շարունա-
կութիւնը արգիւելու համար:
Այս որոշումը միաձայն ըն-
դառնուեցաւ:

ՃԻՐԱՆՍԱ

«Ժուրնալ տը Տէպան» գրու-
թիւնը մըն է հրատարակեր, որով
պայացուցանել կաշխատի թէ՛
շնորհիւ վելլելիս ֆրանսական
կառավարութեան և Վատիկանի
միջեւ եղած խլուճի, կարելի չէ՛
Ֆրանսայի արեւելքի քրիստոն-
եաներու վրայ ունեցած պաշտ-
պանութեան բրուտալ քանկէ իւր
իւր Պապի խօսքով, քանի որ այդ
իրաւունքը իրեն հիմք ունի մի-
ջազգային պայմանագրութիւն-
ներ: Ֆրանսայի իրաւունքները
հիմնուած են հին ժամանակները
Սուլթաններու հետ կնքած պա-
մանագրութիւններու և Պերլիի
զաշնագրի վրայ: Պապը, սոր
համար չի կրնար այդ պաշտպա-
նութեան իրաւունքը ուրիշ պե-
տութեան մը յանձնել: Եւ այս
ով պիտի իր վրան առնէ: Հաս-
տատ է, որ Վատիկանը այդ ի-
րաւունքը Իտալիոյ չը պիտի
տայ, բողոքական Գերմանիային
նոյնպէս ո՛չ, և Ա. ստրիան գրթ-
ուար թէ ցանկութիւն ունենայ
նոր խնդիրով մը բեռնաւորուի:
Արեւելքի քրիստոնեաներու
պաշտպանութեան գործը, զուտ
կրօնական բնուորութիւն կը կրէ
իսկ երէ Պապը կը կամենայ ա-
նոր նաեւ քաղաքական բնաւորու-
թիւն տալ, ստոր համար անհր-
րաժեշտ է, որ Պերլիի դաշնա-
գիրը ստորագրող պետութիւն-
ները նոր վեհաժողով մը ընեն:

ՇԵՆՈՐԶԱԿԱԼԻՔ

Ղարիպեան Սարգիս քահանան և
ընտանիքը կը յայտնեն իրենց խորին
շնորհակալութիւնը այն բոլոր ան-
ձանց, որոնք թէ՛ անձուրք և թէ՛ նա-
մակաւ արտայայտեցին իրենց ցաւա-
ցու թիւնը վաղմեւ գաւազանի համար:

ОТГОВОРНИКЪ
Мурадъ-Ераносянъ
Печатница „Въединность“ Варна